ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ Հ. Հ.

Հասարակության քաղաքական և սոցիալ-տնտեսական փոխակերպումները, կրթության միջազգայնացումը, տեղական և միջազգային աշխատաշուկաների պահանջները հանգեցնում են մասնագիտական կրթության ոլորտում պետական քաղաքականության վերանայման, կրթության որակի ապահովման, միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստման անհրաժեշտությանը: Այսօր առավել, քան երբևէ, աճում է պետական և հասարակական շահագրգռությունը մասնագիտական կրթության որակի նկատմամբ:

Համաշխարհային պրակտիկայում ձևավորվել են մասնագիտական կրթության որակի գնահատման ամենատարբեր մոդելներ (անգլիական՝ ակադեմիական ներքին ինքնագնահատում, ֆրանսիական՝ պետության և հասարակության առջև հաստատության պատասխանատվության տեսանկյունից արտաքին գնահատում, ամերիկյան՝ անգլիական և ֆրանսիական մոդելների համադրություն, ավստրալական՝ ներքին գնահատման և որակի երաշխիքների հետ միաժամանակ արդյունաբերական հաստատությունների երաշխավորություններ, ռուսական՝ հաստատությունների ատեստավորում և այլն) և համակարգեր (ընդհանուր, վարկանշային, արդյունքային և այլն), մշակվել են որակի չափանիշներ և չափորոշիչներ, գնահատման տեխնոլոգիաներ ու մեթոդներ[1]:

Մասնագիտական կրթության որակի գնահատման վարկանշային համակարգում գործածվում է կրթական ծրագրերի և մասնագիտական ուսումնական հաստատությունների ամբողջական գնահատման փորձարարական մեխանիզմը: Մասնագիտական կրթության որակի գնահատման ընդհանուր համակարգը խարսխվում է «որակի համընդհանուր կառավարման» սկզբունքների և Ստանդարտացման միջազգային կազմակերպության որակի կառավարման համակարգի, արդյունքային համակարգը՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակական ցուցանիշների հաշվարկման վրա[2]:

Մասնագիտական կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծումը օրախնդիր է դարձրել մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի անընդհատ կատարելագործումը:

Հավատարմագրումը ենթադրում է հետևյալ նպատակները.

- ապահովել կրթության որակի համապատասխանությունը հիմնական համաձայնեցված չափորոշիչներին, հաստատել ծրագրերի և որակավորման աստիճանների համապատասխանությունը որակի հիմնական համ-

---

[1] **Хауг Г.,** *Обеспечение качества (Европейский журнал по образованию, 2003, N 3, с. 229).*

[2] **Гребнев Л., Попов В.,** *Об организации высшего образования в США (Высшее образование в России, 2004, N 11).*

ընդհանուր չափանիշներին՝ նպաստելով դրանց միջազգային ճանաչմանը,

- խորացնել որակի ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների բովանդակությունը՝ դրանց տալով անհրաժեշտ ազատություններ, հիմնվելով արտաքին առավել բացարձակ և հիմնական չափորոշիչների վրա, նպաստելով առավել հստակ եզրակացությունների զարգացմանը,

- միջազգային մակարդակ ապահովելու նպատակով ծրագրերի և որակավորման աստիճանների համար սահմանել միջազգային չափորոշիչները և չափանիշները (որոնք տարբերվում են ուսանողների շարժունության ապահովմամբ), մտցնել ուսումնական գործընթացի մոդուլավորման և ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, իրազեկությունների գնահատման վարկանիշերի կուտակման և փոխանցման համակարգ, արտասահմանյան առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագետների կողմից ավանդվող դասընթացներ,

- հասարակական և ուսանողական միջավայրերում զարգացնել որակի ապահովման ուղղությամբ միջոցառումների մասին արդյունավետ տեղեկատվության տարածումը և ցույց տալ, որ բարձրագույն ուսումնական հաստատությունը հասարակության առջև պատասխանատվություն է կրում,

- կրթության որակի ապահովման նկատմամբ վերահսկողությունը լրացնել կանոնակարգման այլ ձևերով՝ ներառյալ հաստատության ֆինանսավորումը, ուսանողներին ֆինանսական աջակցությունը, բուհի, ծրագրի, որակավորման ճանաչումը, շրջանավարտների՝ աշխատանքի ընդունվելը և այլն[3]:

Այսպիսով, հավատարմագրման պրակտիկայի տարածումը որակի ապահովման գոյություն ունեցող միջոցների նորացման և վերածննդի գործընթացի մաս է կազմում: Ընդհանուր առմամբ, հավատարմագրումը կրթության որակի խթանման և վերահսկողության համակարգ է, որը հնարավորություն է ընձեռում հաշվի առնել կրթության զարգացման հարցում բոլոր շահագրգիռ կողմերի հետաքրքրությունները՝ համադրելով վերահսկողության հասարակական և պետական ձևերը: Այլ կերպ՝ կրթական ծրագրերի, հաստատության հավատարմագրումը որևէ լիազորված կառույցի (գործակալության, այլ կազմակերպության) կողմից այդ կառույցի պահանջներին տվյալ ծրագրով մասնագետների պատրաստման համապատասխանությունը պարզելու նպատակով իրականացվող պաշտոնական փորձաքննություն է:

Տարբեր երկրներում, տարբեր գիտելիքների բնագավառներում և նույնիսկ հավատարմագրող տարբեր գործակալություններում ձևավորվել են «հավատարմագրում» հասկացության տարբեր սահմանումներ և համապատասխանաբար՝ հավատարմագրման տարբեր նպատակներ ու խնդ-

[3] *Policies and Procedures for ABET Substantial Equivalency Evaluation. Accreditation Board for Engineering and Technology, Inc., 111 Market Place. Suite 1050, Baltimore, MD 21202.*

դիրներ, իրականացման բուն գործընթացի էական տարբերություններ: Այդուհանդերձ, բոլոր դեպքերում հավատարմագրման էությունն այն է, որ հաստատվի տվյալ կրթական ծրագրով ուսումնառության շնորհիվ ստացած մասնագիտական կրթության մակարդակի, ծավալի և որակի համապատասխանությունը տվյալ երկրում, գործակալությունում, գիտելիքների տվյալ բնագավառում կիրառվող մասնագիտական կրթության մակարդակը, ծավալը, որակը որոշող և հավատարմագրման չափանիշները սահմանող կրթական չափորոշիչների պահանջներին: Այսպիսով, հավատարմագրումը հիմնվում է մասնագիտական կրթական չափորոշիչների վրա և որևէ կրթական տարածքի՝ ազգային կամ միջազգային նորմատիվ և կազմակերպական բազան է:

Վերոնշյալ ընթացակարգը Ռուսաստանի Դաշնությունում անվանում են ատեստավորում, իսկ հավատարմագրման հասկացությանն օրենքով ամրագրված է ատեստավորման հետ սերտ կապի մեջ գտնվող, ամբողջ հաստատությանը վերաբերող այլ ընթացակարգ: Յուրաքանչյուր հաստատություն և նրա յուրաքանչյուր մասնաճյուղ ինքնուրույն են անցնում ընթացակարգերը, որոնք օրենքին համապատասխան ճանաչված են երաշխավորելու կրթության որակի որոշակի մակարդակ: Այդ ընթացակարգերի էությունն են արտոնագրումը, ատեստավորումը և հավատարմագրումը[4]: Արտոնագրով երաշխավորվում են միայն որակի ապահովման ընդհանուր պայմանները: Ատեստավորումը նպատակաուղղված է յուրաքանչյուր կոնկրետ կրթական ծրագրի որակի վերլուծությանը, ամենից առաջ նրա առարկայի բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության, ինչպես նաև շրջանավարտների մակարդակով ծրագրի կենսագործման բացահայտմանը՝ գնահատող մանկավարժական չափիչ նյութերով ստուգելու միջոցով: Հավատարմագրման առարկան ուսումնական հաստատության տիպի և տեսակի հաստատումն է կամ փոփոխումը[5]:

Այլ են հավատարմագրման էությունը, բովանդակությունը, առարկան, օբյեկտը և ընթացակարգերը Հայաստանի Հանրապետությունում: Հավատարմագրման օբյեկտներն են մասնագիտական ուսումնական հաստատությունների մասնագիտությունները՝ ըստ որակավորման աստիճանների կամ կրթական ծրագրերի և մասնագիտությունների 75% հավատարմագրման արդյունքով՝ հաստատությունները (ավելի ճիշտ կլիներ մասնագիտությունների 75% հավատարմագրման արդյունքով՝ կրթական ծրագիրը, կրթական ծրագրերի հավատարմագրման արդյունքով՝ հաստատությունները): Տարբեր են նաև հավատարմագրման սահմանումները՝ մասնագիտական կրթության բնագավառը կարգավորող օրենքներով: Այսպես, հավատարմագրումը սահմանվում է որպես.

---

[4] *Аттестация, аккредитация высших учебных заведений (под ред. Аврамова Ю. С.), М., 1993.*

[5] *Закон Российской Федерации "Об образовании", N 3266-1.*

- պետության կողմից պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչում[6],

- պետության կողմից բուհի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչում[7]:

Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների հաստատված չափորոշիչներում խոսք անգամ չկա բուհի, կըրթական ծրագրի, կրթության որակի մասին, իսկ 2003-2006 թթ. բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների չափորոշիչների հախուռն հաստատման ընթացքում մի շարք նույն դասիչով և անվանմամբ մասնագիտությունների համար հաստատվել են մեկից ավելի չափորոշիչներ:

Այդուհանդերձ, նշենք, որ առկա հակասությունների պայմաններում ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման նախագծված մոդելը բովանդակային, կառուցվածքային, ընթացակարգային առումներով թերևս վատագույնը չէ. այն պարունակում է անգլիական մոդելի ներքին ինքնագնահատումը (որը մեր պարագայում մեծ մասամբ վստահելի չէ), ֆրանսիական արտաքին գնահատումը (մեր դեպքում օբյեկտիվ և պրոֆեսիոնալ չէ), սովորողների ամփոփիչ ատեստավորումը՝ ռուսական տարբերակով (գործող տարբերակը հիմնավոր չէ և վիճարկվում է) և այլն: Ցավոք, մոդելը, որ լուրջ փոփոխությունների, կատարելագործման և բարելավման կարիք ունի, շարունակում է գործել իր անթույլատրելի և բացասական հետևանքներով՝ միաժամանակ լուրջ խոչընդոտ լինելով բարձր վարկանիշ ունեցող հաստատությունների զարգացման և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման համար:

Օրենսդրության և պետական հավատարմագրման առկա գործընթացը հանրապետությունում խաթարել է նաև հաստատությունների վարկանիշի ձևավորման բնականոն գործընթացը: Լավագույն բուհեր են համարվում ոչ թե որակյալ կրթական ծառայություններ մատուցող և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ տվող հաստատությունները, այլ օրենքով արդեն գոյություն չունեցող լոկ պետական նմուշի դիպլոմներ շնորհող բուհերը: Այս առումով տեղին է նշել, որ արտոնագրված, բայց չհավատարմագրված բուհերի դիպլոմների նկատմամբ սահմանափակումների վերացումը կհասցնի նրան, որ հավատարմագրումը կծառայի ոչ թե որպես հավատարմագրված մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում հաջորդ աստիճանի կրթություն ստանալու համար պարտադիր պայման կամ պետական մարմինների և բյուջետային հիմնարկների համար կրթության մասին վկայող փաստաթուղթ հանձնելու միջոց, ինչպես ամրագրված է «Կրթության մասին» ՀՀ օրենքում, այլ կնպաստի կրթության որակի բարձրացմանը, մասնագիտական միջին և բարձրագույն ուսումնական հաստատություն-

---

[6] «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3:

[7] «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3:

ների իրական վարկանիշի ձևավորմանը, այլընտրանքային հավատարմագրման կազմակերպությունների, այս իմաստով նաև՝ առողջ մրցակցային հնարավորությունների ստեղծմանը և, վերջապես, հավատարմագրման մրցավազքի ինքնանպատակ կրքերի հանգստացմանը:

ԱՄՆ-ում հավատարմագրման հիմնական նպատակներն են՝

- ապահովել բարձրագույն մասնագիտական կրթության առաջընթացը կրթության արդյունավետության գնահատման սկզբունքների և չափանիշների մշակման հաշվին,
- խթանել կրթական հիմնարկների զարգացումը, կրթական ծրագրերի կատարելագործումը՝ անընդհատ ինքնահետազոտման և պլանավորման ճանապարհով,
- հասարակությանը վստահեցնել, որ ուսումնական հաստատությունը կամ կոնկրետ կրթական ծրագիրն ունեն ճիշտ ձևակերպված նպատակներ և դրանց հասնելու կոնկրետ պայմաններ,
- օգնություն ապահովել բուհի կայացման, զարգացման, կրթական ծրագրերի իրականացման գործում,
- ուսումնական հաստատության կրթական գործունեությունը պաշտպանել միջամտություններից, իսկ ակադեմիական ազատությունները՝ սահմանափակումներից[8]:

ԱՄՆ-ում կրթական հիմնարկների հավատարմագրումը կոլեկտիվ ինքնակարգավորման համակարգ է, որը հավասարակշռում է ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունները, իրավունքները և պետության ու հասարակության առջև դրանց պատասխանատվությունը:

Հավատարմագրման չափորոշիչները, չափանիշները կազմում են հաստատության՝ իր նշանակությանը համապատասխան գործունեության արդյունավետության չափման բովանդակային հիմքը: ԱՄՆ-ում հավատարմագրող յուրաքանչյուր գործակալություն մշակում է իր չափանիշները, որոնք անընդհատ, մանրազնին քննարկվում են, և արդյունքների մասին տեղեկացվում են ուսումնական հաստատությունները: Համալսարանի հավատարմագրված լինելը հաստատում է, որ նա ունի հիմնավոր նպատակներ, դրանք իրականացնելու ռեսուրսներ, ապացույցներ և դրանց հասնելու հեռանկարներ:

ԱՄՆ-ում գոյություն ունի հավատարմագրման երկու տեսակ. *հատուկ* (մասնագիտական), երբ գնահատվում են առանձին կրթական ծրագրեր ու բուհի գործունեությունը ծրագրում ընդգրկված մասնագիտությունների գծով, մասնագետների պատրաստման մասով, և *ինստիտուցիոնալ*, երբ գնահատվում է ամբողջ հաստատությունը՝ որպես հասարակական կառույց: Հատուկ հավատարմագրման կազմակերպման համար, մինչև առանձին կրթական ծրագրի հավատարմագրումը, որպես կանոն, պահանջվում է հաստատության ինստիտուցիոնալ հավատարմագրում: Ընդ որում, ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում հաստատության որոշ թերություններ կարող են համակշռվել այլ առավելություններով, իսկ հատուկ հավատարմագրումը գործում է «կրթական ծրագիրը ամուր է

[8] **Гребнев Л., Попов В.,** *Аккредитация и контроль качества образовательных программ в США (Высшее образование в России, 2005, N 2).*

այնքանով, ինչքանով ամուր է նրա ամենաթույլ օղակը» սկզբունքին խիստ համապատասխան: Ծրագիրը հավատարմագրվում է, եթե նրա բոլոր բաղկացուցիչ դասընթացները համապատասխանում են ցուցանիշներին[9]:

Հատուկ հավատարմագրման հիմնական գործառնություններն են. օգնել դիմորդներին ուսումնական հաստատությունը ընտրելու, մասնավոր ձեռնարկություններին և կազմակերպություններին՝ կրթության ոլորտում ներդրումների կազմակերպման հարցերում և նպաստել կառավարական մարմինների կողմից կրթական հիմնարկներին ցուցաբերվող օժանդակության վերաբերյալ որոշումներ ընդունելուն:

Հատուկ հավատարմագրման ուշադրության կենտրոնում, որպես կանոն, գտնվում է միայն ուսուցման գործընթացի բովանդակային մասը՝ հիմնարար գիտելիքներ, նախագծման կարողություններ, գործնական հմտություններ, համակարգիչների օգտագործում:

Եվրոպական երկրներում դեռևս չկա կրթական հիմնարկների ինստիտուցիոնալ գնահատման, ԱՄՆ-ի հավատարմագրման համակարգին համարժեք, միասնական համակարգ: Սակայն յուրաքանչյուր երկրում գոյություն ունի բարձրագույն կրթության որակի գնահատման ուրույն համակարգ:

Մեծ Բրիտանիայում գործում է համալսարանների և կրթական ծրագրերի հավատարմագրման բազմաստիճան համակարգ, որի գլխավոր դերում Quality Assurance Agency (QAA) կառավարական կազմակերպությունն է: Մի շարք բրիտանական բուհեր իրականացնում են այլ ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի գնահատում QAA-ին համաձայնեցված չափանիշներով: Մեծ Բրիտանիայում լուրջ վարկանիշ ունեցող The Open University (OU) համալսարանը 1992 թ. ստեղծել է իր The Open University Validation Services (OUVS) կառույցը, որը Մեծ Բրիտանիայում և դրա սահմաններից դուրս զբաղվում է կրթական հիմնարկների և ծրագրերի հավատարմագրմամբ: The Open University Validation Services-ը իրականացնում է գնահատման հետևյալ տեսակները.

- դիագնոստիկ՝ կրթական ծրագրերի իրականացմանը պատրաստ և ունակ լինելը որոշող, ինչպես նաև ուսուցման գործընթացում ծագող հնարավոր հիմնախնդիրները բացահայտող,
- ձևավորող՝ հետադարձ կապի ուսուցանող տարրերը՝ որպես կրթական գործընթացի մաս,
- ամփոփիչ՝ ուսումնական գործընթացի արդյունքներով ձեռքբերումները և բացթողումները ամրագրող[10]:

Գերմանիայում կրթության բազմաստիճան համակարգի անցումը հանգեցրեց մի շարք հավատարմագրող կազմակերպությունների ստեղծմանը: 1998 թ. ստեղծվեց բակալավրի և մագիստրոսի պատրաստման ծրագրերի գնահատման հավատարմագրման խորհուրդ, որը հավատարմագրող գործակալությունների համար մշակեց չափորոշիչներ և չափանիշներ: 1999 թ. հիմնադրվեց ճարտարագիտական և համակարգչային մասնագիտությունների հավատարմագրման գործակալություն: Գերմանիայում

---

[9] **Попов В. П.,** *Аккредитация и признание программ инженерного образования в США (Высшее образование сегодня, 2003, N 3, с. 26).*

[10] *WWW.open.ac.uk.*

առաջին հավատարմագրող կազմակերպությունը դարձավ Ներքին Սաքսոնիայի կենտրոնական գործակալությունը՝ Central Agency of Evaluation of Lower Saxony's Institutions of Higher Education (ZEvA): Այժմ մեծ ակտիվությամբ աշխատում է Accreditation Agency for Study Programs in Engineering, Informatics, Natural Sciences and Mathematics (ASIIN) գործակալությունը, որը հավատարմագրում է կրթական ծրագրերը տեխնիկայի, ինֆորմատիկայի, բնական գիտությունների և մաթեմատիկայի բնագավառներում և այլ գործակալություններ՝ մասնագետների պատրաստման տարբեր ուղղություններով[11]:

Ինչպես Գերմանիայում, այնպես էլ ողջ Եվրոպայում մեծ վարկանիշ ունի բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատումը[12]: Ինքնակառավարման համակարգով աշխատող համալսարաններում գործում է կրթության որակի ապահովման ներբուհական համակարգը:

Ռուսաստանի Դաշնությունում բարձրագույն մասնագիտական կրթության կառավարման կատարելագործման և կրթության որակի վերահսկողության բարելավման ու արդյունավետության բարձրացման համակարգը ենթադրում է.

- բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին ուղեկցող ուսումնամեթոդական փաստաթղթերի մշակում,
- տարբեր աստիճանների (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) բարձրագույն մասնագիտական կրթությամբ մասնագետների որակավորման բնութագրերի ձևավորում,
- կրթության որակի վերահսկողության ներքին համակարգի մշակում, բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների մակարդակի գնահատման մեթոդական հիմքերի ստեղծում,
- կրթական հիմնարկների գործունեության արտոնագրման, ատեստավորման և հավատարմագրման ընթացակարգերի կատարելագործում,
- ատեստավորման և որակի վերահսկողության անկախ համակարգի ձևավորում:

Վերջին տարիներին բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում լայնորեն օգտագործվում է *անդրազգային կրթություն* հասկացությունը: Դա նշանակում է, որ ուսանողը կրթություն է ստանում արտասահմանյան համալսարանում՝ ապրելով իր երկրում: Այլ երկրում սովորելով՝ ուսանողը սահման չի անցնում, սահմանն «անցնում են» կրթական ծրագրերը և դառնում անդրազգային: Նման կրթական գործունեությունը իրականացվում է կամ ֆիզիկապես, կամ վիրտուալ:

Անդրազգային կրթության որակի միջազգային վերահսկողության նպատակով ստեղծվել է Global Alliance for Transnational Education (GATE) կազմակերպությունը, որը մշակել է անդրազգային կրթության տասը սկզբունք՝ նպատակներ և խնդիրներ, չափորոշիչներ, օրենսդրություն և էթիկա, ուսանողների ընդունելություն, մարդկային ռեսուրսներ, նյութա-

---

[11] *WWW. asiin.dc.*

[12] **Вроейнстийн А.И.,** *Оценка качества высшего образования, М., 2000.*

կան և ֆինանսական ռեսուրսներ, ուսուցում, օժանդակություն ուսանողներին, գնահատում, երրորդ կողմեր[13]:

Բարձրագույն կրթության որակի ապահովման և գնահատման արտասահմանյան մեթոդների վերլուծությունը վկայում է տարբեր երկրներում մոտեցումների և ավանդությունների տարբերության մասին: Բայց և այնպես, մոտեցումների և գնահատման տարբեր համակարգերում հիմնական ուշադրությունը բևեռվում է ռեսուրսների, գործընթացների և արդյունքների վրա, իսկ տարբերությունն այն է, թե դրանցից ո՞րն է առանձնացվում և ի՞նչ չափով:

Իրականացված համեմատական վերլուծությունները հաստատում են, որ ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման նախագծված մոդելը բովանդակային, կառուցվածքային, ընթացակարգային առումներով վատ չէ, անգամ հետաքրքրական է, սակայն դեռևս հեռու է բավարար լինելուց և պահանջում է համակողմանի վերակառուցման, կատարելագործման անհետաձգելի միջոցառումներ:

Նախ և առաջ հարկ է նշել կրթության որակի գնահատման և պետական հավատարմագրման սկզբունքների բացակայության մասին, ինչը հավատարմագրման գործընթացը դարձնում է անձև, ինքնանպատակ՝ չնպաստելով կրթության որակի բարձրացմանը, հող ստեղծելով կամայականությունների համար: Ներքոնշյալ մի շարք սկզբունքների ամրագրումը, կարծում ենք՝ կնպաստի մեր իրականության մեջ հավատարմագրման նպատակների ճիշտ ձևակերպմանը և գործընթացին՝ երևույթի հասարակական վարկանիշի ապահովմանը: Այդ սկզբունքներն են. հավատարմագրումը դիտել որպես՝

1. կրթության և մասնագետների պատրաստման որակի երաշխիք,
2. կրթության արդյունավետության բարձրացմանը և բարելավմանը նպատակաուղղված գործընթաց,
3. կրթական միջավայրի ստեղծման և որակյալ կրթության նկատմամբ հետաքրքրությունների միջոց,
4. կրթական ծրագրերի, մասնագիտությունների չափորոշիչների՝ գիտության նվաճումներին համապատասխանությունը որոշելու և դրանք անընդհատ կատարելագործելու ուղիների ինդիկատոր,
5. մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ հասարակության և պետության առջև պատասխանատվության բարձրացման գործոն,
6. մասնագիտական ուսումնական հաստատությունների նկատմամբ պետության կողմից վստահության հավաստիք և դրանց ֆինանսական ու նյութական օժանդակության հիմք,
7. մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող կրթական գործունեության ծավալման և կրթական ծրագրերի ու մասնագիտությունների հնարավորության ընդլայնման պայման,
8. մասնագիտական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության պայմանների բարելավման, միջոցների արդիականացման խթան,

---

[13] **Адам С.,** *Отчет о транснациональном образовании (Брюссель: Европейская Комиссия/CEURC/, 2001).*

9. պատրաստվող մասնագետների որակի վրա մասնագիտական շահագրգռվածության ազդեցության ընդլայնման պայմանների ապահովման միջոց:

Կրթության որակի գնահատման, հավատարմագրման գործընթացում ցուցանիշները՝ որպես չափանիշներին համապատասխանության սկզբունքներ կարելի է դիտարկել հետևյալ կերպ.

1. գնահատականները պետք է լինեն համակողմանի, օբյեկտիվ, հրապարակային, արդարացի, հիմնավոր, ստույգ և գործուն,

2. գնահատականները պետք է հասցեագրվեն ուսումնական գործընթացի արդյունքներին,

3. գնահատման չափանիշները բոլորի համար պետք է լինեն միարժեք և պարզ,

4. որակի գնահատման գործընթացում ստուգման և գնահատման ենթակա են ուսանողների գիտելիքները, գործնական կարողությունները, հմտությունները, ինչպես նաև շրջանավարտների աշխատանքային իրազեկությունները,

5. շրջանավարտների գիտելիքների, գործնական կարողությունների, հմտությունների, աշխատանքային իրազեկությունների գնահատումը իրականացվում է ռեֆերատների, լաբորատոր-գործնական, գրավոր և գրաֆիկ, ստեղծագործական, կուրսային և դիպլոմային աշխատանքների ստուգման, բանավոր և գրավոր ստուգարքների և քննությունների միջոցով,

6. գնահատականները ենթակա չեն քննարկման, արդյունքները՝ վերագնահատման գնահատող հանձնաժողովներից դուրս,

7. արդյունքները պարբերաբար վերագնահատվում են,

8. գնահատականները վերահսկող, ուսուցանող, զարգացնող և կազմակերպող գործառնությունների համար պետք է ապահովված լինեն գործողության պայմաններ:

Էական է, որ հաստատության ուսումնական գործունեության վերլուծության (ներքին գնահատում) և փորձաքննության (արտաքին գնահատում) չափանիշների ու դրանց համապատասխան ցուցանիշների գերակշիռ մասը կրթության որակին անմիջական առնչություն չունեցող պայմանների վերաբերյալ զուտ նկարագրություններ պահանջող, մյուս մասը՝ կրթական գործունեության պայմանների և կրթության որակին առնչվող, սակայն անհրաժեշտ չափաքանակների բացակայության և եղածի ցածր մակարդակի պատճառով որոշակի գնահատական չտվող հարցադրումներ են: Այս իմաստով, հաշվի առնելով հավատարմագրման միջազգային փորձը, ՀՀ օրենսդրությունը, տեղական պայմանները և կրթական ավանդույթներն ու կուտակված փորձը՝ առաջարկում ենք սահմանել պետական հավատարմագրման նպատակով իրականացվող ուսումնական գործունեության ինքնավերլուծության, ինքնագնահատման և փորձագիտական եզրակացություններ տալու նպատակով կատարվող ուսումնասիրությունների և փորձաքննությունների չափանիշների չորս խումբ՝ համապատասխան ցուցանիշներով.

I. Հաստատության կրթական գործունեության պայմաններ. գիտամանկավարժական անձնակազմ, ուսումնամեթոդական ապահովվածու-

թյուն, ուսումնական հաստատության տարածքներ, նյութատեխնիկական բազա, ուսումնալաբորատոր և գիտահետազոտական բազաներ, նյութական օժանդակություն բուհի կողմից և ֆինանսական ռեսուրսներ, գրադարանային և տեղեկատվական ապահովվածություն, բավարարվածություն և հագեցվածություն, պրակտիկայի բազաներ, ծրագրի նկատմամբ հատուկ պահանջներ:

II. Կրթության որակի ապահովում. ծրագրի կրթական նպատակները, բովանդակությունը, հիմնական խնդիրները և ինքնագնահատման հավաստիության գնահատումը, ուսանողները (ընդունելությունը, տեղափոխությունը, ուսումնառությունը), ուսանողներին մասնագիտական գործունեության նախապատրաստումը, շրջանավարտները (շրջանավարտների ինքնիրացումը աշխատաշուկայում), ուսումնական հաստատության կրթության կազմակերպման փաստաթղթերը:

III. Կրթության որակի վերահսկողության համակարգ. ուսումնական պլանի կատարման, ուսուցման որակի, ուսումնառության որակի վերահսկողություն:

IV. Հաստատության կրթական գործունեության պայմանների զարգացում. ուսումնական հաստատության կրթական ծրագրի և բովանդակության, ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի կատարելագործում, գիտամանկավարժական անձնակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման կազմակերպում, գիտամանկավարժական կադրերի գիտամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հրատարակում, նյութատեխնիկական բազայի արդիականացում և հաստատության ֆինանսական վիճակի բարելավում, տեղեկատվական համակարգի զարգացում, ուսուցման նորագույն տեխնոլոգիաների ներդրում և ուսուցման կազմակերպման ձևերի զարգացում, կատարելագործում, դասավանդողների և ուսանողների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում, գործատուներին և շահագրգիռ կազմակերպություններին մասնագետների պատրաստմանը մասնակից դարձնելու գործընթացների իրականացում:

Առաջին երկու խմբի վերոնշյալ չափանիշների գնահատման համար պետք է հստակ սահմանվեն միջազգային նորմերին համարժեք չափաքանակներ, այդ դեպքում միայն կարելի կլինի խոսել առկա վիճակի՝ չափանիշներին համապատասխանության կամ անհամապատասխանության մասին: III և IV չափանիշները բավարարված կհամարվեն դրական առաջընթաց ապահովելու դեպքում միայն, ինչը առավելագույն չափով հնարավոր կլինի վերահսկել հատկապես ժամկետային հավատարմագրման դեպքում:

Նման պայմաններում անհրաժեշտություն է առաջանում վերանայել նաև ուսումնական գործունեության փորձաքննություն իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները: Դրանք պետք է լինեն մշտապես գործող, ամենաբարձր որակավորում, ուսումնական և փորձագիտական աշխատանքի լուրջ փորձ ունեցող մասնագետներով համալրված պետական կառույցներ: Ուսումնական գործունեության փորձաքննությունների համար պետք է սահմանվի առավել երկար ժամանակահատված: Հաշվի առնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները,

նկատի ունենալով ստեղծված իրավիճակը, կարծում ենք՝ միառժամանակ պետք է գործի կրկնակի փորձաքննության ինստիտուտը, որը կնպաստի ինքնավերլուծության և փորձաքննության որակին և արժանահավատությանը:

Չնայած կրթության որակը որակական հատկանիշ է, այդուհանդերձ, այն ճիշտ է չափել քանակական ցուցանիշներով: «Կրթության մասին» ՀՀ օրենքով պետական հավատարմագրման հաջորդ պայմանը առանձին մասնագիտությունների գծով՝ երկու տարի անընդմեջ շրջանավարտների առնվազն 60% ատեստավորման դրական արդյունքներն են: Նման պայմանը բնավ էլ չի համապատասխանում հավատարմագրման բուն էությանը, քանի որ «3» թվանշանը դրական արդյունք է, բայց ամենևին էլ ոչ որակ արտացոլող: Կարծում ենք՝ դրական արդյունքների փոխարեն պետք է գործի դրվի որակական առաջադիմությունը՝ «4» և «5» թվանշանները: Բացի այդ, ճիշտ չէ նաև ամփոփիչ ատեստավորման բովանդակային կառույցը: Ամփոփիչ ատեստավորումը՝ որպես մասնագետների պատրաստման որակի վերահսկողության ձև, տարածված է շատ երկրներում, բայց դրանց միջոցով հնարավոր է ստուգել լոկ սերտած տեսական գիտելիքները՝ առանց պատկերացում կազմելու շրջանավարտների գործնական կարողությունների, հմտությունների և աշխատանքային իրազեկությունների մասին:

Ասպիսով, կրթական ծրագրերի, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների հավատարմագրման գործում առկա են երեք խմբի խնդիրներ՝ կապված օրենսդրական փոփոխությունների միջոցով պետական հավատարմագրման մոդելի կատարելագործման և գործող համակարգի բարեփոխումների և բարելավման, իրականացված հավատարմագրման գործընթացների հետևանքներով առաջացած թերությունների վերացման, հավատարմագրման հետագա բուն գործընթացների իրականացման հետ, որոնք մանրամասն կարելի է ներկայացնել հետևյալ խնդիրների տեսքով.

1. վերացնել կրթության բնագավառը կարգավորող օրենքներում և ենթաօրենսդրական փաստաթղթերում առկա հակասությունները,

2. ելնելով կրթության որակի պատշաճ ապահովման հույժ կարևորությունից՝ ընդունել օրենք կրթության որակի և հավատարմագրման մասին, սահմանել պետական հավատարմագրման կոնկրետ նպատակներ և սկզբունքներ,

3. ստեղծել մասնագիտական կրթության մասնագիտությունների չափորոշիչներ մշակող պետական կառույց,

4. պետական հավատարմագրման նպատակով ուսումնական գործունեության փորձաքննությունների իրականացման համար կազմավորել անկախ, մշտապես գործող, բարձրակարգ որակավորում, ուսումնական և փորձագիտական աշխատանքի լուրջ փորձ ունեցող մասնագետներով համալրված պետական կառույցներ,

5. վերացնել արտոնագրված, բայց չհավատարմագրված բուհերի կողմից տրվող դիպլոմների նկատմամբ սահմանափակումները,

6. մասնագիտությունների պետական հավատարմագրումից անցնել ամբողջական կրթական ծրագրերի հավատարմագրման՝ ըստ մասնագի-

տական կրթության մակարդակների, պետական հավատարմագրման համար սահմանել 5-ամյա ժամկետ,

7. պետական հավատարմագրման նպատակով իրականացվող շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ժամանակ գնահատման ենթակա դարձնել շրջանավարտների գիտելիքները, կարողությունները, հմտությունները և աշխատանքային իրազեկությունները,

8. կրթության որակի, շրջանավարտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման ժամանակ դրական արդյունքների փոխարեն գործի դնել որակական արդյունքները՝ «4» և «5» թվանշանները,

9. վերանայել նաև ուսումնական գործունեության փորձաքննություն իրականացնող կազմակերպություններին ներկայացվող պահանջները, սահմանել ուսումնական գործունեության փորձաքննության արդյունքների համար պատասխանատվության կարգը, ստեղծել կրկնակի փորձաքննության ինստիտուտ,

10. հաշվի առնելով հավատարմագրման միջազգային փորձը, ՀՀ օրենսդրությունը, տեղական պայմանները, առկա իրավիճակը՝ սահմանել պետական հավատարմագրման նպատակով իրականացվող ուսումնական գործունեության ինքնավերլուծության, ինքնագնահատման և փորձագիտական եզրակացությունների, ուսումնասիրությունների և փորձաքննությունների չափանիշներ,

11. ուսումնական գործունեության ինքնավերլուծության, ինքնագնահատման և փորձագիտական եզրակացությունների, ուսումնասիրությունների և փորձաքննությունների համար սահմանել ողջամիտ ժամկետ,

12. ուսումնական գործունեության ինքնավերլուծության և փորձաքննությունների չափանիշները սահմանել ըստ մասնագիտական կրթության մակարդակների, մասնագիտությունների ուղղությունների,

13. օրենսդրորեն, ՌԴ օրինակով, ամրագրել բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատության տիպի և տեսակի սահմանումը պետական հավատարմագրման արդյունքներով,

14. սահմանել կրթական գործունեության պայմանների և կրթության որակին առնչվող միջազգային նորմերին մոտ նորմատիվներ և չափաքանակներ՝ բարձրացնելով կրթական գործունեության արտոնագրման պայմանների շեմը,

15. պետական հավատարմագրման գործընթացում կարևորել ուսուցման և տեղեկատվության ժանանակակից տեխնոլոգիաների ներդրման, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման, գիտամեթոդական և ուսումնամեթոդական, գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման աշխատանքները, ինչպես նաև պատրաստվող մասնագետների պահանջարկին և ուսանողների սոցիալական երաշխիքներին առնչվող հարցերը՝ դրանց համար սահմանելով հստակ չափանիշներ,

16. կարևորել ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերը այն հաշվով, որ վերահավատարմագրում չի կարող ստանալ հավատարմագրման յուրաքանչյուր չափանիշի մասով առաջընթաց ցուցանիշներ չապահովող հաստատությունը,

17. կրթական գործունեության արտոնագրերի տրամադրումը ժամկետավորել, դրանք տալ ոչ ավելի, քան 5-ամյա ժամկետով, և մեծացնել հաստատությունների պատասխանատվությունը ստացած արտոնագրի պայմանների պահպանման հարցում,

18. նախատեսել կրթության որակի պարտադիր մշտադիտարկում,

19. նախատեսել պատասխանատվություն կրթության որակի ապահովման նկատմամբ և անորակ կրթության դեպքում ուսումնական հաստատությունների կողմից շրջանավարտներին փոխհատուցում՝ այլ ուսումնական հաստատությունում անվճար կրթություն ստանալու հնարավորություն ապահովելու միջոցով,

20. պայմաններ ստեղծել հասարակական հավատարմագրման ինստիտուտի կայացման և զարգացման համար՝ հավատարմագրման ոլորտում խթանելով մրցակցության սկզբունքը,

21. պայմաններ ստեղծել մասնագիտական ուսումնական հաստատությունների իրական վարկանիշի ձևավորման համար,

22. մեծացնել հավատարմագրված հաստատությունների պատասխանատվությունը կրթության փաստաթղթերի ստացման, լրացման, հաշվառման, հատկացման և պահպանման հարցում,

23. բարձրացնել հավատարմագրված հաստատությունների պատասխանատվությունը միջազգային պայմանագրերի, օրենքի և օրենսդրական նորմատիվ փոփոխությունների, կառավարության, կրթության լիազորված մարմնի կողմից սահմանված կարգերի պահպանման նկատմամբ,

24. կրթության որակի և հավատարմագրման խնդիրների քննարկման նպատակով գիտաժողովների պարբերաբար հրավիրումը՝ առավելագույնս ներգրավելով բնագավառի գիտական ներուժը:

Հավատարմագրման տարբեր համակարգերի համեմատական վերլուծության արդյունքներով առաջարկությունները կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության համակարգում արտոնագրման և հավատարմագրման բարեփոխումներին, կրթական ժամանակակից չափորոշիչների ստեղծմանը, միջազգային չափանիշներին համապատասխան կրթության որակի ապահովմանը:

О ПРОБЛЕМАХ АККРЕДИТАЦИИ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММ

ПЕТРОСЯН Г. А.

Резюме

Совершенствование управления, контроля качества образования и аккредитации профессиональных образовательных программ является одним из важнейших направлений развития образования. Анализ методов обеспечения и оценки качества высшего образования, аккредитации профессиональных образовательных программ свидетельствует о различных подходах и традициях в различных странах.

Модель государственной аккредитации профессиональных образовательных программ и учебных заведений, система управления и контроля качества образования в Республике Армения в условиях несовершенного законодательства отнюдь не худшая. С помощью законодательных изменений, определения принципов и более высоких критериев аккредитации можно достигнуть оптимизации и повышения эффективности контроля качества образования и тем самым добиться решения существующих проблем в данной сфере.